Հավելված N8
Էկոնոմիկայի նախարարության
գլխավոր քարտուղարի 2019թ.
հոկտեմբերի 26-ի N 636-Ա հրամանի

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳԻՐ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՄԱՍՆԱԳԵՏԻ

1.Ընդհանուր դրույթներ

1.1. Պաշտոնի անվանումը, ծածկագիրը

էկոնոմիկայի նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) որակի ենթակառուցվածքների զարգացման վարչության (այսուհետ՝ Վարչություն) գլխավոր մասնագետ (ծածկագիրը՝ 23-32.8-Մ2-3)

1.2. Ենթակա և հաշվետու է

Գլխավոր մասնագետն անմիջական ենթակա և հաշվետու է Վարչության պետին:

1.3. Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները

Գլխավոր մասնագետի բացակայության դեպքում նրան փոխարինում է վարչության գլխավոր մասնագետներից մեկը:

1.4. Աշխատավայրը

Հայաստան, ք. Երևան, Կենտրոն վարչական շրջան, Միհեր Մկրտչյան 5

2.Պաշտոնի բնութագիր

2.1. Աշխատանքի բնույթը, իրավունքները, պարտականությունները

1) իրականացնում է ստանդարտացման ոլորտի պետական քաղաքականության մշակման հետ կապված աշխատանքները.

2) իրականացնում է Որակի ենթակառուցվածքների (մասնավորապես՝ ստանդարտացման) զարգացման ռազմավարության, դրանից բխող միջոցառումների և գործողությունների ծրագրի մշակում.

3) իրականացնում է ստանդարտացման ազգային մարմնի գործունեության համակարգման աշխատանքներ.

4) իրականացնում է ստանդարտացման ոլորտում օտարերկրյա և միջազգային, ինչպես նաև մասնավոր կազմակերպությունների հետ համագործակցության խորացման աշխատանքներ.

5) իրականացնում է ստանդարտացման ոլորտի զարգացման համար կանխատեսելի նորմատիվ-իրավական դաշտի ձևավորման և արդյունավետ ընթացակարգերի ներդրման աշխատանքներ.

6) իրականացնում է անվտանգ արտադրանքի ներքին և արտաքին շուկաներ մուտք գործելու խոչընդոտների վերացմանն ուղղված աշխատանքներ.

7) իրականացնում է ստանդարտացման ոլորտին առնչվող գործառույթների, խնդիրների հետ կապված պարզաբանումների և պատասխանների պատրաստում, անհրաժեշտության դեպքում դրանցից բխող քայլեր կատարելու (այդ թվում՝ օրենսդրական փոփոխությունների) վերաբերյալ առաջարկությունների ներկայացում:

Իրավունքները՝

- պահանջել ստանդարտացման ոլորտում իրականացվող գործընթացների համալիր վերլուծությունների, համապատասխան կանխատեսումների հիման վրա ոլորտների զարգացման ռազմավարական ծրագրերի, հայեցակարգերի, օրենքների և իրավական այլ ակտերի

նախագծերի մշակման հետ կապված փաստաթղթեր և հիմնավորումներ.

- պահանջել տեղեկատվություն ազգային որակի ենթակառուցվածքների բաղկացուցիչ մաս հանդիսացող ստանդարտացման ոլորտի զարգացման հեռանկարային ուղղվածության ապահովման և գոյություն ունեցող համակարգի բարեփոխման աշխատանքների իրականացման նպատակով ներկայացված առաջարկությունների ամփոփման համար.
- կազմակերպել քննարկումներ մասնագիտական կարծիքներ ստանալու նպատակով
- մասնակցել ստանդարտացման ազգային մարմնի կառուցվածքային փոփոխություններին, հաստիքացուցակների վերակազմավորման, եկամուտների ու ծախսերի նախահաշիվների հաստատման համար համապատասխան մարմիններից ներկայացված հիմնավորող փաստաթղթերի հարցերով կազմակերպվելիք քննարկումներին, ժողովներին.
- կազմակերպել աշխատանքային քննարկումներ տարբեր ստորաբաժանումների ներկայացուցիչների ստանդարտացման ոլորտում պետական քաղաքականության պատշաճ աշխատանքների իրականացման նպատակով:

Պարտականությունները՝

- ուսումնասիրել ոլորտը կարգավորող իրավական ակտերը և ներկայացնել համապատասխան առաջարկություններ.
- իրականացնել ներկայացված փաստաթղթերի՝ օրենսդրությամբ սահմանված պահանջներին համապատասխանության ստուգում և ներկայացնել մասնագիտական առաջարկություններ և եզրակացություններ.
- իրականացնել ստանդարտացման բնագավառի պետական քաղաքականության վարման իրավական ակտերի մշակման և իրականացման ապահովման հետ կապված աշխատանքներ.
- իրականացնել ստանդարտացման ոլորտի հետ կապված նախարարության այլ ստորաբաժանումների, պետական կառավարման մարմինների և մասնագիտացված կառույցների հետ համագործակցության աշխատանքների կազմակերպում.
- կազմակերպել ստանդարտացման ոլորտում ծագած խնդիրներին լուծումներ տալու նպատակով քննարկումներին և բանակցություններին (այդ թվում նաև տեսակոնֆերանսների ձևաչափով).
- ուսումնասիրել ստանդարտացման ազգային մարմնի կողմից իրականացված գործունեության եռամսյակային հաշվետվությունները.
- իրականացնել ստանդարտացման ոլորտի վերաբերյալ առաջարկությունների, տեղեկանքների, հաշվետվությունների, միջնորդագրերի, զեկուցագրերի և այլ գրությունների նախապատրաստում, ոլորտին առնչվող հարցերի, խնդիրների, մասնագիտական նշանակության խնդիրների բացահայտման, վերլուծման և գնահատման աշխատանքներ:

3.Պաշտոնին ներկայացվող պահանջներ

3.1. Կրթություն, որակավորման աստիճանը

Բարձրագույն կրթություն

3.2. Մասնագիտական գիտելիքները

Ունի գործառույթների իրականացման համար անհրաժեշտ գիտելիքներ

3.3. Աշխատանքային ստաժ, աշխատանքի բնագավառում փորձը

Հանրային ծառայության առնվազն երկու տարվա ստաժ կամ երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ տնտեսագիտության բնագավառում՝ երեք տարվա աշխատանքային ստաժ:

3.4. Անհրաժեշտ կոմպետենցիաներ

Ընդհանրական կոմպետենցիաներ՝

1.Ծրագրերի մշակում
2. Խնդրի լուծում
3. Հաշվետվությունների մշակում
4. Տեղեկատվության հավաքագրում, վերլուծություն
5. Բարեվարքություն

1. **Ընտրանքային կոմպետենցիաներ՝**
1. Բանակցությունների վարում
2. Կոնֆլիկտների կառավարում
3. Ժամանակի կառավարում
4. Ելույթների նախապատրաստում և կազմակերպում
5. Փաստաթղթերի նախապատրատում

4. Կազմակերպական շրջանակը

4.1. Աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվությունը

Պատասխանատու է համապատասխան մարմնի և կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների բնույթով պայմանավորված մասնագիտական գործունեության անմիջական արդյունքի համար:

4.2. Որոշումներ կայացնելու լիազորությունները

Կայացնում է որոշումներ աշխատանքների իրականացման բնույթով պայմանավորված մասնագիտական եզրակացությունների տրամադրման և ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերում որոշումների կայացման շրջանակներում:

4.3. Գործունեության ազդեցությունը

Ունի տվյալ մարմնի նպատակների և խնդիրների իրականացման արդյունքների ապահովման մասնագիտական գործունեության որոշակի ոլորտին վերաբերող համապետական ազդեցություն:

4.4. Շփումները և ներկայացուցչությունը

Իր իրավասությունների շրջանակներում շփվում և որպես ներկայացուցիչ հանդես է գալիս տվյալ մարմնի ներսում այլ կառուցվածքային ստորաբաժանումների, այլ մարմինների ներկայացուցիչների հետ, հանդես է գալիս պետական մարմինների և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությամբ ձևավորված աշխատանքային խմբերում:

4.5. Խնդիրների բարդությունը և դրանց լուծումը

Իր լիազորությունների շրջանակներում բացահայտում է մասնագիտական խնդիրներ և այդ խնդիրներին տալիս է մասնագիտական լուծումներ և մասնակցում կառուցվածքային ստորաբաժանման առջև դրված խնդիրների լուծմանը: